752. ԽԱՉՔԱՐ. կանգնած է գյուղի հյուսիսային կողմի հնագույն գերեզմանատան մեջ, ճակատին, 1 տող.

ՏՐ ԱԾ Ⓡ ՅՍ+Ս ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ:

753. ԽԱՉՔԱՐ. գյուղից 1 կմ հարավ-արևելք, ձորի մեջ, «Ճգնավորի» մատուռի արևելյան պատի մեջ, մակերեսին, 5 տող.

ՅԻՇԵՑԵՔ
Ի ՔՍ:
ԵՍ՝ ՁԱՔԱՐԷ
Ս, ԿԱՆԳՆԵՑ
Ի ՍԲ ԽԱՉՍ:

ԱՐԵՎԱԾԱԳ

Անցյալում գյուղը կոչվել է Նոր Ուզունլար, Ներքին Ուզունլար, Ղաչաղան:

Գյուղի տարածքում ճարտարապետական հուշարձաններն առանձնապես շատ չեն: Առավել կարևորը գյուղի հարավակողմում գտնվող հանգստարանն է: Այստեղ կա մի մատուռ, որի տանիքը չի պահպանվել, և այժմ այն փայտածածկ է: Ս. Բարխուդարյանը ենթադրում էր, որ «մոտիկ մի տեղում կանգնած է եղել Ս. Սարգիս անունով մի խաչքար, որը կանգնեցվելուց հետո նրա անունով շինել են այս մատուռը և պատի մեջ էլ օգտագործել նրա արձանագրված պատվանդանը»:

Այդ պատվանդանի արձանագրության մեջ Ս. Սարգիս անունը հիշատակված է և չի բացառվում, որ հենց այս պարագան մատուռի անվանակոչման գործում ունեցել է իր դերը:[66]

754. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. ագուցված Ս. Սարգիս մատուռի արևելյան պատի հարավային անկյունում, 6 տող.



Ի ՆՀ: (1021) ԹՎԱԿԱՆՈՒԹԵ[Ա]Ն[Ս] ՀԱՅՈՑ, ԵՍ՝ [ԿԻ]ՐԱԿՈՍ
ՄԵՂՈՒՑԵԱԼ ՔԱՀԱՆԱ, ԿԱ[Ն]Կ[Ն]ԷՑ[Ի] ՍՈՒՐԲ ՍԱՐ
ԳԻՍ [Ի] ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ[ՒՆ]
ՔՐ[Ի]ԳՈՐՈՅ, ԻՒՐ ՈՐԴԵՑՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵ[Ա]Ն ՀՈԳՈՅ ԻՄՈՅ ՃՆ[ՈՂ]-
ԱՑ ԵՒ ՁԱՎԱԿԱՑ ԻՄՈՑ: ՈՐ ԿԱՐՈՂԱՔ՝ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ՈՒ ՅԻՇ
ԷԱՔ ՍԱՄՈՒԷԼԱ Ի ՔՍ:

Ծանոթ. Արձանագրության իմաստը հստակ է, իսկ *Սամուէլը* խաչքարագործ վարպետն ու գրիչն է:

Կասկածելի է վերջին տողի վերծանությունը (խմբ.):

---

[66] *Առաջաբանը Ալ. Մանուչարյանինն է, Ս. Բարխուդարյանի կարծիքը հղված չէ (խմբ.):*

755. ՄԱՏՈՒՈՒ արևելյան պատին, նախորդի տակ, հարթ քարի վրա, 5 տող



ՅԷՎԱՆ
ԷՍ ԻՐԻՑ-
ՈՒԷ. ԳՐԱԾ
:ՇԷ: (1058) ԹՎԱԿ-
ԱՆԻՍ

Ծանոթ. Նման հնությամբ թվագիր արձանագրությունները բավականին սակավ են Գուգարքում:

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ

756. ԽԱՉՔԱՐ. գյուղամիջյան գերեզմանոցում, անմշակ պատվանդանի վրա, կողանիստերին՝

ՍԲ ԽԱՉՍ ԲԼԱՅՐԼԵԽԱՒՍՅԼԵՐ ՔԱՒԱՐԱՆԱՒՆ
ԱՒԱՔ ԱՂԼԲԱՒՐՆՅ: (ԺԵԴ.)

Ծանոթ. *Քաւարանաւն* նկատի ունի ոչ թե դրախտի և դժոխքի բաժանարարը, այլ մեղքերի քավությունը՝ դրախտում տեղ ստանալու փափագով:

757. ԽԱՉՔԱՐ. գյուղից 1 կմ արևմուտք, մատուռի մեջ.

ԹՎԻՆ :ՈՃԶ (1207):

Ծանոթ. Խաչքարը մրապատ է մոմի հալվածքով հագեցած, և խորանի գրերը չեն կարդացվում:

ԱՅԳԵՀԱՏ (Իգահատ, Դանուշավան)

Գտնվում է Դեբեդի ձախակողմյան դարավանդի վրա, Օձունից հարավ, որի «Դիրք տեղւոյն չէ գովելի, մանաւանդ զուրկ են ի կողմանէ ջրոյ»:[67] Հին անունը հայտնի չէ. վերապահել է գյուղից արևելք, ձորամիջում գտնվող Իգահատ-Այգեհատ անունը: Զալալյանցի ասելով՝ գյուղը «... զայս անուն ընկալաւ սա ի դրից տեղւոյն, զի այգիք ցայս վայր գան, և ասդէն դադարին. ուստի ասացաւ այգեհատ»:[68] Նույնը կրկնում է նաև Լալայանը. «Գիւղը իւր անունն ստացել է այն հանգամանքից, որ այստեղ այգիները հատնում են, այսինքն սրանից հարաւ այլևս այգիներ չկան»:[69] Տեղական բարբառում այգեհատ նշանակում է ոչ թե այգին հատել, կտրել, էտել, այլ այգին հատած, վերջացած ավարտած, պրծած: Գյուղանունը, ուրեմն, ծագել է իր դիրքի (= դրից), տեղանքի հետևանքով, որից դենը՝ հարավ, այլևս այգիներ չկան: Ձորամիջյան Իգահատը լքվել-ամայացել է ԺԶ դարի վերջերին, իսկ վերին հարթակի գյուղը՝ հավանաբար Շահ Աբասի ժամանակներում: Սակայն վերջինս վերաբնակեցվել է ԺԸ դ., որի բնակիչները Շահվերդյան ազնվական տոհմից են, որոնք ոչ տանուտեր, ոչ էլ գյուղական դատավոր չունեին, այլ

---

[67] *Զալալյանց*, Ա, էջ 102:
[68] Նույն տեղում:
[69] «Ազգ. հանդ., VII-VIII, էջ 343: